

ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ

Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը ստեղծվել է 1943 թ.՝ ԱրմՖԱՆԻ գրականության և լեզվի ինստիտուտի հիմքի վրա: Ինստիտուտում գործում են վեց բաժիններ, որոնք համակողմանիորեն հետադոտում են հայ գրականությունը պատմական տարբեր փուլերում և հրատարակության պատրաստում հայ դասականների երկերը:

Ինստիտուտի հիմնական օղակներից է հայ հին և միջնադարյան գրականության բաժինը, որտեղ այժմ աշխատում են մեկ տասնյակից ավելի գիտնական-բանասերներ: Երկար տարիներ նրա աշխատակիցներն են եղել և այն ղեկավարել են նշանավոր գիտնականներ Ե. Տեր-Մինասյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Խ. Սարգսյանը, այժմ բաժինը վարում է բանասիրական գիտությունների դոկտոր Մ. Ավդալբեգյանը:

Այստեղ հետադոտման առարկան հայ հին և միջնադարյան գեղարվեստական գրականությունն է, որը ներկայացնում է հայ գրականության պատմության ամենածավալուն հատվածը՝ տասնչորս դարերի տեղումնամբ, գրական-մշակութային տարբեր օջախներից ելած տասնյակ հեղինակներով, գրական-գեղարվեստական այլազան երևույթներով ու տեսակներով:

Հատկանշական է այն փաստը, որ գործունեության առաջին տարիներին գրականության ինստիտուտը լույս ընծայեց ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանի երկհատոր «Հայոց հին գրականության պատմությունը», որտեղ համակարգված և հետադոտված է հայ հին և միջնադարյան գրականությունը, վերլուծված են մի շարք գեղարվեստական մեծարժեք երկեր: Այս աշխատությունը, որ այսօր էլ չի կորցրել իր արժեքը, նորաստեղծ բաժնի համար կարևոր ուղեցույցի դեր կատարեց:

Բաժնի գիտահետադոտական աշխատանքներն ընթացել և ընթանում են երկու հիմնական ուղղությամբ՝ բնագրագիտական և տեսական-բանասիրական: Բնագրագիտական աշխատանքն

ընդգրկում է հայ հին և միջնադարյան գրական-գեղարվեստական երկերի քննական բնագրերի կազմումը և բնագրագիտական-բանասիրական քննությունը: «Միջնադարյան հայ տաղերգուներ» մատենաշարով արդեն լույս են ընծայվել Խաչատուր Կեչառեցու և Գրիգորիս Աղթամարցու, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների, Հովհաննես Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի, Մարտիրոս Ղրիմեցու, Առաքել Բաղիշեցու և Ներսես Մոկացու տաղերը՝ ծավալուն ներածականներով ու ծանոթագրություններով: Այս շարքից դուրս հրատարակվել են նաև Ներսես Շնորհալու «Ողբ Եղիսիոյ» և «Վիպասանութիւն» պոեմների քննական բնագրերը, ուշ միջնադարի տաղասացներ Երեմիա Քյոմուրճյանի և Սարգիս Ապուլեիցու բանաստեղծությունները, ինչպես նաև XVII—XVIII դդ. հայ աշուղների երգերի, XIV—XVII դդ. պատմական ողբերի և միջնադարյան պանդխտության տաղերի ժողովածուներ:

Դեռևս 1957 թ. Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ և առաջաբանով լույս տեսավ «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» ժողովածուն, որի մեջ ընդգրկված միջնադարյան զրույցների, պարականոնների, առակների ու խրատականների բնագրերը ընտրել, կազմել և ծանոթագրել էին բաժնի աշխատակիցները: Այս ժողովածուն, ըստ էության, նրա առաջին հրատարակությունն էր և ուներ հիմնաքարային նշանակություն: Հետագայում առավել խորությամբ ուսումնասիրվեց միջնադարի հայ գեղարվեստական արձակը և որոշ վիպական ժանրեր: 1969 թ. լույս տեսավ Ա. Սրայյանի «Հայ միջնադարյան զրույցներ» աշխատությունը, որտեղ հրապարակված են նաև զրույցների՝ թվով 124 հատընտիր բնագրեր:

Այսօր էլ բաժինը շարունակում է լուրջ աշխատանք տանել միջնադարյան բնագրերի հրատարակման ուղղությամբ: Պատրաստվել է և շուտով տպագրության կհանձնվի միջնադարի խոշորագույն հայ բանաստեղծի՝ Գրիգոր Նա-

րեկացու «Սատեան Ողբերգութեան» երկի համահավաք ընագիրը (աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի)։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ գիտական բացառիկ արժեք ունեցող այդ գործը բաժնի տեքստաբանական աշխատանքների հանրագումարն է և բարձրակետը։

Արդեն ավարտվել և հրատարակության են ներկայացվել նաև ուշ միջնադարյան տաղասացների ստեղծագործությունների ստվարածավալ մի ժողովածու, ինչպես նաև միջնադարի վերջին խոշոր քնարերգու Սայաթ-Նովայի հայերեն խաղերի առաջին ակադեմիական հատորը։

Միջնադարյան թարգմանական հուշարձանների մեջ նշանակալից է Կեղծ Կալիսթենեսի «Աղեքսանդրի պատմությունը»։ V դարում հայերեն թարգմանված, բանավոր և գրավոր ուրույն ճանապարհ անցած ու ազգայնացած այս բարդ ու բազմաշերտ բնագիրը հրատարակության է պատրաստում բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Սիմոնյանը։ Հրատարակության են ներկայացվել նաև միջնադարյան թարգմանական հուշարձաններից «Վասն մանկան և աղջկան» և Փահլուլ թագավորի արձակ պատումների քննական բնագրերը։

Միջնադարյան արձակ և չափածո գեղարվեստական երկերից դատ ուսումնասիրվում է նաև միջնադարյան հայ գեղագիտական, տեսական-քննադատական միտքը։ Զեռագիր և տպագիր աղբյուրներից հավաքվում և հրատարակության են պատրաստվում միջնադարի հայ գրականագիտական, գեղագիտական միտքն արտացոլող նյութեր։ Դրանց հիման վրա հետադաշում հնարավոր կլինի շարադրել միջնադարյան հայ գեղագիտական մտքի պատմությունը։

Բաժնում որոշ աշխատանքներ են տարվում նաև միջնադարյան հուշարձանները ուսերեն թարգմանելու ուղղությամբ։ Անցյալի մեր հոգևոր հարուստ ժառանգությունը աշխարհին ներկայացնելու համար թերևս լավագույն միջոցը ուսերեն թարգմանությունն է։ Եվ այս ուղղությամբ պետք է մտածել ու գործել առավել լրջորեն։ Դեռևս 1973 թ. Մաշտոցի անվան Մատենադարանը Ք. Տեր-Դավթյանի թարգմանությամբ և աշխատասիրությամբ ուսերեն հրատարակեց «Հայ վարքագրական հուշարձաններ» գրքի առաջին պրակը, որը լայն արձագանք գտավ նաև մեր հանրապետության սահմաններից դուրս Ք. Տեր-Դավթյանը, որ այժմ աշխատում է գրականության ինստիտուտում, պատրաստել և հրատարակության է հանձնել նաև գրքի երկրորդ պրակը, որն ընդգրկում է Գրիգոր Նարեկացու, Հովհաննես Սարկավագի, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տաթևացու և այլ

նշանավոր գործիչների վարքերի ու վկայարանությունների ուսերեն թարգմանությունները։

Զնայած հրապարակի վրա են արդեն միջնադարյան գեղարվեստական երկերի բազմաթիվ հատորներ՝ թե՛ դրականության ինստիտուտի և թե՛ Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակությամբ, այնուհանդերձ գեղարվեստական արժեք ունեցող մի շարք հուշարձաններ կամ առհասարակ հրատարակված չեն կամ հրատարակվել են բնագրագիտական ոչ բավարար մակարդակով և կարոտ են վերահրատարակության։ Ուստի և այս ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան։

Հին և միջնադարյան դրականության բաժինը մինչև այժմ հրատարակել է ինչպես պատմաբանասիրական, այնպես էլ տեսական-գրականագիտական բնույթի մի շարք ուսումնասիրություններ։ Դրանց մի զգալի մասը նվիրված է միջնադարյան առանձին ճեղհականների կյանքի և գործի քննությանը։ Պետք է ասել, որ միջնադարյան տաղերգուներին նվիրված գրեթե բոլոր հատորներն ընդգրկում են թե՛ այդ հեղինակների ստեղծագործությունները և թե՛ նրանց վերաբերող բանասիրական-գրականագիտական ուսումնասիրություններ։ Դրանցից դատ, առանձին մենագրություններ են գրվել նաև Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Նազաշ Հովնաթանի, Հովհան Մայրագոմեցու մասին։ Այս բաժնում աշխատելու տարիներին է գրել Պարույր Սևակը «Սայաթ-Նովա» արժեքավոր աշխատությունը։

Վերջին ժամանակներում բանասիրական, բնագրագիտական աշխատանքներին զուգընթաց կատարվում են նաև տեսական-գրականագիտական հետազոտություններ։ Հրապարակ են հանվել առանձին ուսումնասիրություններ միջնադարյան որոշ ժանրերի մասին՝ զրույցներ, պատմական ողբեր, շարականներ, կաֆաներ, ձեռագրական հիշատակարաններ։ Առանձին աշխատություններ են հրատարակվել նաև միջնադարյան հայ արձակի և քնարերգության դրսևւորումների և առանձնահատկությունների մասին՝ տարբեր դարաշրջաններում։ Այդպիսին են՝ Մ. Ավդալբեկյանի «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, V դ.», Հ. Սահակյանի «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, XVI—XVII դդ.», Վ. Ներսիսյանի «Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական միջոցները, XIII—XVI դդ.» և Ք. Տեր-Դավթյանի «XI—XV դարերի հայ վարքագրական հուշարձանները» գործերը։

Ուսումնասիրվում են նաև գրական, գեղարվեստական արժեք ունեցող միջնադարյան ժողովածուները։ Նշանավոր «Վկայք Արևելից» ժողովածուին վերաբերող բնագրագիտական

ուշագրավ հետազոտությամբ հանդես է եկել երիտասարդ բանասեր, աստագետ Լ. Տեր-Պետրոսյանը: Ուսումնասիրություն է լույս տեսել Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» մասին: Հրատարակության է հանձնված «Հայսմավուրք» ժողովածուների պատմական և գրական արժեքը վեր հանող աշխատություն: Նմանօրինակ մի ուսումնասիրություն է գրվում նաև միջնադարյան վարք-վկայաբանություններ ընդգրկող մեկ այլ ժողովածուի՝ «Հայելի վարուցի» վերաբերյալ: Ուսումնասիրվում են նաև հին Հայաստանի գրական, կրթական օջախները, նրանց դերն ու նշանակությունը միջնադարյան հայ գրականության զարգացման մեջ:

Միջնադարյան ժողովածուները և գրական ժանրերի զգալի մասը ծխական-կիրառական և կրոնական-աստվածաբանական նշանակությունից զատ ունեն որոշակի պատմական և գեղարվեստական արժեք, կրում են ժամանակի գեղագիտական մտքի ու ճաշակի կնիքը: Ուսումնասիրողների խնդիրն է վեր հանել այդ երկերի գրական-գեղարվեստական արժեքը, դիտելով ու քննելով դրանք հայ գրականության պատմության ընթացքի մեջ:

Հետազոտողի առջև միջնադարի հայ քերթությունը միշտ նորանոր շերտեր է բացում՝ ցուցաբերելով իր ներքին անսպառ հարստությունները: Նոր հայացքով ու մոտեցմամբ ուսումնասիրվում են Գրիգոր Նարեկացու, Ֆրիկի, Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը, հայ տաղերգության ժողովրդական ակունքները, հայ հին գրականության ավանդները նոր և սովետահայ շրջանի գրողների երկերում:

Հայ հին և միջնադարյան գրականությունը իր դարավոր գոյության ընթացքում, մեր ժողովրդի ճակատագրի բերումով, առնչվել է այլ ժողովուրդների գրականությունների հետ, ազդել նրանց վրա և ազդվել նրանցից: Հայ հին գրականությունը հատկապես աղբյուրվել է բյուզանդական, ասորական, պարսկական, վրացական գրականությունների հետ. այդ գրական կապերը սյետք է ուսումնասիրվեն առաջին հերթին: Դեռևս 1963 թ. Բ. Չուգասզյանի հեղինակությամբ հին գրականության բաժինը հրատարակել է «Հայ-իրանական գրական առնչություններ» աշխատությունը, նույն հեղինակի աշխատասիրությամբ լույս են տեսել «Խրատք նուշիրո՞ւնի» պարսկական խրատականները, որոնք թափանցել են միջնադարի հայ մատենագրության մեջ: Լույս է ընծայվել նաև «Արտա վիրապ նամակ» և «Յուշտի Ֆրիան» պահլավական նշանավոր հուշարձանները՝ Ռ. Աբրահամյանի թարգմանությամբ ու ծանոթագրություններով: Այսուհանդերձ հայ-պարսկական

գրական կապերին վերաբերող բազմաթիվ հարցեր ու խնդիրներ տակավին կարոտ են գիտական լուրջ հետազոտության: Նույնը վերաբերում է նաև միջնադարյան հայ-վրացական գրական առնչություններին: Այս կապակցությամբ պետք է հիշել Պ. Մուրադյանի «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» աշխատությունը, որ հրատարակվեց գուսան-բանաստեղծի ծննդյան 250-ամյա հոբելյանի օրերին: Այսօր էլ որոշ աշխատանքներ են տարվում հայ հին և միջնադարյան գրական կապերի հետազոտման ուղղությամբ:

Օգտագործելով գիտահետազոտական բազմամյա աշխատանքի շնորհիվ ձեռք բերած իր փորձն ու հմտությունը՝ հին գրականության բաժինն այժմ ձեռնարկել է հայ հին գրական ժանրերին նվիրված մի կոլեկտիվ ժողովածու, որի կարիքը վաղուց է զգացվում: Այդտեղ ժամանակակից տեսական մտքի դիրքերից և պատմական մոտեցմամբ կներկայացվեն հայ հին գրական ժանրերը, նրանց զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները: Այս ժողովածուի հաջող իրագործումը մեծապես կնպաստի առաջիկայում ստեղծելու նաև հայ հին գրականության պատմության տեսությունը, մի բան, որ այսօր բաժնի կարևորագույն խնդիրն է:

Հայ հին և միջնադարյան գրականության բաժինն իր գործուն մասնակցությունն է բերում նաև հանրապետության գիտական, մշակութային կյանքին: Նրա աշխատակիցները հաճախ հանդես են գալիս հրապարակային դասախոսություններով, մասնակցում են գիտական նստաշրջաններին, հոգավածներ և ուսումնասիրություններ հրապարակում գիտական հանդեսներում և հանրապետական մամուլում:

Մեծ էր հին գրականության բաժնի դերը հատկապես Ներսես Շնորհալու ծննդյան 800-ամյակի օրերին: Հիշատակելի է նաև, որ անցած տարվա հունիսին Լենինգրադում, Պուշկինյան տանը կայացած հայ հին գրականության եռօրյակին ուշագրավ զեկուցումներով հանդես եկան բաժնի որոշ աշխատակիցներ: Պետք է ասել նաև, որ երիտասարդ գիտաշխատողների գիտական նստաշրջաններում հետաքրքիր զեկուցումներով ու հաղորդումներով հանդես են գալիս կրտսեր գիտաշխատողներն ու աուպի-րանտները:

Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժինը իր շուրջ երեսունհինգամյա գործունեության ընթացքում քիչ աշխատանք չի կատարել, բայց նա դեռևս ունի բազում լուծելի հարցեր ու խնդիրներ:

Ռաճասիր. գիտ. քեկնածու Հ. Գ. ՐԱՆՉԻՆՅԱՆ